ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«30» 10 2024 թ.
№ ՊԵՏ/1897

«ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերությանը
ՀՎՀՀ 00481595
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Մուշական 8փ. 92տ
հեռ. +37460388838

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 26.12.2022թ. կնքվել է N ՀՄԱԱՇՁԲ-22-10/33-1 գնման պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համաձայնագիր կնքելու միջոցով: Ֆինանսական միջոցներ՝ 100,000,000 (հարյուր միլիոն ՀՀ դրամ) նախատեսվելուց հետո 27.08.2025թ. վերոնշյալ մասնակցին սահմանված կարգով ուղարկվել է ծանուցում N 5 Համաձայնագիրը կնքելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցը չի կնքել համաձայնագիրը և տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները չի փոխարինել բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով:

Այս կապակցությամբ հարկ եմ համարում նշել, որ Պայմանագրի 8.15 կետի համաձայն, եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիրը կնքվում է, եթե կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Պայմանագրին կից 11.03.2024թ. կնքված N 2 Համաձայնագրի շրջանակներում Ընկերությունը մինչև 2024թ. նոյեմբերի 30-ը պետք է կատարեր 943,314,266 (ինը հարյուր

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

քառասուներեք միլիոն երեք հարյուր տասնչորս հազար երկու հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամի աշխատանքներ, սակայն 2025թ. թվականի սեպտեմբերի 24-ի դրությամբ Ընկերությունը չի կատարել 39,235,472 (երեսունինները միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամի աշխատանքներ: Պայմանագրին կից 08.07.2024թ. կնքված N 3 Համաձայնագրի շրջանակներում Ընկերությունը մինչև 2024թ. նոյեմբերի 30-ը պետք է կատարեր 271,157,875 (երկու հարյուր յոթանասունմեկ միլիոն հարյուր հիսունյոթ հազար ութ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամի աշխատանքներ, սակայն 2025թ. սեպտեմբերի 24-ի դրությամբ Ընկերությունը չի կատարել 107,676,489 (հարյուր յոթ միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար չորս հարյուր ութսունինները) ՀՀ դրամի աշխատանքներ:

Այս կապակցությամբ հարկ եմ համարում նշել, որ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «բ» պարբերությունը պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե կապալառուն խախտել է պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Պայմանագրին կից 19.03.2025թ. կնքված N 4 Համաձայնագրի և 22.08.2025թ. կնքված N 6 Փոփոխության շրջանակներում Ընկերությունը մինչև 2025թ. դեկտեմբերի 20-ը պետք է կատարեր 150,384,842 (հարյուր հիսուն միլիոն երեք հարյուր ութսունչորս հազար ութ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամի աշխատանքներ, սակայն 2025թ. հոկտեմբերի 23-ի դրությամբ Ընկերությունը չի կատարել 21,649,717 (քսանմեկ միլիոն վեց հարյուր քառասունինները հազար յոթ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամի աշխատանքներ:

Այս կապակցությամբ հարկ եմ համարում նշել, որ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «ա» պարբերությունը պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

Աշխատանքների մնացած մասի գումարը, որը կազմում է 48,033,225 (քառասունութ միլիոն երեսուներեք հազար երկու հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ նախատեսվում էր իրականացնել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում և դրա հիման վրա կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի կնքման միջոցով:

Հիմք ընդունելով վերը նշվածը ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. հոկտեմբերի 31-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը՝ 316,594,903 (երեք հարյուր տասնվեց միլիոն հինգ հարյուր իննսունչորս հազար իննը հարյուր երեք) (39,235,742+107,676,489+21,649,717+100,000,000+48,033,225) ՀՀ դրամի աշխատանքների մասով:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 14,911,564 (տասնչորս միլիոն իննը հարյուր տասնմեկ հազար հինգ հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) և 6,824,284 (վեց միլիոն ութ հարյուր քսանչորս հազար երկու հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում ենթակա է գանձման նաև պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 306,659,569 (երեք հարյուր վեց միլիոն վեց հարյուր հիսունիններեք հազար հինգ հարյուր վաթսունիններեք) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը՝ 94,978,471 (ինչսունչորս միլիոն իններեք հարյուր յոթանասունութ հազար չորս հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում եմ, եթե մինչև 2025թ. նոյեմբերի 10-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները, ապա Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. նոյոմբերի 10-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2068 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի և տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

Կատարող՝ ՀՀ ՊՆ ԳԿ վարչության
3-րդ բաժնի պետ Կ. Սահակյան
Հեռ. 010-29-44-99